


# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

# «ՓԱՐՊԻԻ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ԾՐԱԳԻՐ

## 2024-2029 ԹԹ.

---

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝

Աննա Քաջիկի Ղազարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------3
Զարգացման ծրագիր--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------4
1. Հաստատության գործունեությունը-------------------------------------------------------------------------------------------------------------8
2. Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը-------------------------------------------------------------------------------------20
2.1 Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան------------------------------------------------------------------21
2.2 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն----------------------------------------------------25
2.3 Կառավարման և խորհրդակցական մարմիններ--------------------------------------------------------------------------------------29
2.4 Աշակերտական համակազմ--------------------------------------------------------------------------------------------------------------------34
2.5 Մանկավարժական համակազմ---------------------------------------------------------------------------------------------------------------40
2.6 Համագործակցությունը տեղական ինքնակառավարմանմարմինների, ծնողական համայնքի,
կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ------------------------------------------------48
2.7 Ուսումնական միջավայր-----------------------------------------------------------------------------------------------------------------------51
2.8 Տեխնոլոգիաներ ևնորարարություններ----------------------------------------------------------------------------------------------- 53
2.9 Բազմակարծիք, ներառականևմասնակցայինարժեքայինմիջավայր-------------------------------------------------------------- 56
2.10 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթություն-----------------------------------------------------------------60
2.11 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ-----------------------------------70
2.12 Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը-----------------------------------------------------------------------------------73

3. Նպատակների ախնդիրների սահմանում----------------------------------------------------------------------------------------------------------------- 77
4. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ -----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------91
5. Զարգացման ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները ավերահսկողությունը---------------------------------------------------- 97

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ ու առաքինին գործերը միշտ համախմբում են մարդկանց

Ստեփան Ցվայգ

Ժամանակակից աշխարհում շատ արագ են ընթանում փոփոխությունները գրեթե բոլոր ոլորտներում: Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքը, անհրաժեշտ նորարարական ու ստեղծագործական մտքի ձևավորումը անհատական, ազգային և համաշխարհային մակարդակներում դարձել է ցանկացած երկրի և անձի մրցունակության և գործունեության արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայմաններից մեկը: Հաշվի առնելով առկա մարտահրավերները Հայաստանում և արտաքին աշխարհում, դպրոցը այսօր պետք է ստանձնի մեծագույն պատասխանատվություն՝ կերտել 21 դարի հայ մարդուն, ով ունի բազմաբովանդակ կրթություն, որի հիմքում են ազգային արժեքները, նորագույն տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունները, ստեղծագործական միտքը և քննադատական մտածելակերպը:

Կրթությունը պիտի իրականացվի ազգային հենքի վրա՝համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ, պիտի նպաստի մարդու և քաղաքացու շահերին, պատրաստի մրցակցային կյանքին, բացահայտելով երեխայի հնարավորությունները, ծառայի անհատին ու ժողովրդին, իրականացվի ուսուցման ու դաստիրակության միասնականության սկզբունքով՝զերծ մնալով խտրականությունից և սահմանափակումներից:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական կարևորագույն փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը հաստատությունում:

Անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները այն ամեն օր իրականություն դարձնելու և դպրոցի մեծ ընտանիքը մասնակից դարձնելու այդ գործում:

ՀՀ Արագածոտնի մարզի «Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029 թվականների զարգացման ծրագիրը կազմվել է ԿԳՄՍ նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը» փաստաթղթի, Հանրակրթության մասին օրենքի և Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների, կրթական վերջնարդյունքներին և կարողունակություններին համապատասխան:

Վերլուծությունների համար հիմք են հանդիսացել դպրոցի գործունեության նախորդ 3 ուսումնական տարիների ներքին գնահատման հաշվետվությունները, արտաքին և ներքին գործոնները՝ կրթական քաղաքականության միտումները,ժամանակակից կրթական պահանջները, համայնքի կարիքներն ու հնարավորությունները, ուսումնական հաստատության առանձնահատկությունները, շահառու խմբերը, հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները այլն:

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| Փաստաթղթի անվանումը | ՀՀ Արագածոտնի մարզի Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոցի Զարգացման ծրագիր 2024-2029 թթ. |
| Իրավական հիմքերը | «Կրթության մասին» ՀՀօրենք<br>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք<br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ Հանրակրթության պետական չափորոշիչ<br>«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք<br>«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք<br>«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀօրենք<br>Դպրոցի կանոնադրություն |
| Իրականացման ժամանակահատվածը | 2024-2029 թթ. |
| Ծրագրի նպատակը | • Համայնքի կարիքներին համապատասխանող կրթության բովանդակության և համապատասխան միջավայրի ապահովում՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի զարգացման արդի միտումների վրա, որոնք համընկնում են ազգային նկարագրին և արժեհամակարգին<br>• Ազգային պետականության պահանջներին համապատասխան հայ մարդու և քաղաքացու դաստիարակություն<br>• 21-րդ դարի պահանջներին համապատասխան կրթության ապահովում<br>• Կրթությունից դուրս մնացած երեխաների ինտեգրումը դպրոց<br>• Բազմակարծիք, ներառական, մասնակցային կրթության միջավայրի ապահովում<br>• Մանկավարժների ինքնազարգացման, մասնագիտական կարողությունների կատարելագործում<br>• Բուլինգի կանխարգելում<br>• Դպրոցական արժեհամակարգի ձևավորում<br>• Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում<br>• Դպրոցի հեղինակության բարձրացում |

| | |
|---|---|
| Ծրագրի խնդիրները | • Ստեղծել ախտորոշման տարբեր գործիքների կիրառմամբ տեղեկատվական բազա՝ առաջիկա 5 տարիների զարգացման առաջնահերթությունները մատնանշելու և դրանցից բխող քայլեր կատարելու համար<br>• Մշակել կամ վերաձևակերպել ներքին նորմատիվ ակտեր<br>• Ապահովել արդիականացված կրթական միջավայր, որը համապատասխանում է համայնքի կրթական պահանջներին և արդի կրթական պահանջներին<br>• Նպաստել նորարարական կրթական մեթոդների ներդրմանը<br>• Կատարելագործել դպրոց-ծնող-համայնք կապը<br>• Համալրել, հարստացնել նյութատեխնիկական, ուսումնանյութական բազան<br>• Յուրաքանչյուր աշխատակցի որակյալ և պատասխանատու աշխատանքի լավագույն արդյունքով ապահովել դպրոցի հեղինակությունը |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները | • Ազգային հենքով որակյալ կրթության ապահովում<br>• Կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացման ապահովում<br>• Ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացում՝ պետական կրթական չափորոշչին և կրթակարգին համապատասխան<br>• Կրթության որակի բարձրացում<br>• Կրթության մատչելիություն<br>• Յուրաքաչյուր սովորողի հնարավորությունների բացահայտման և զարգացման համակարգի ձևավորում<br>• Կարողունակ քաղաքացիների ձևավորում<br>• Մանկավարժների մասնագիտական հմտությունների զարգացում<br>• Ուսումնական հաստատության պետական-հասարակական կառավարման մակարդակի բարձրացում |
| Հնարավորությունները՝ առկա ռեսուրսները | • Շենքային պայմաններ<br>• Նյութատեխնիկական բավարար բազա<br>• Ծրագրերի, թեմատիկ և օրվա դասի պլանների հետևողական կատարում<br>• ՏՀՏ գործիքների առկայություն<br>• Նորարարություններին ընդառաջ գնացող մանկավարժական և աշակերտական համակազմ<br>• Մասնագիտական կատարելագործմամբ, ինքնակրթությամբ զբաղվելու ցանկություն ունեցող ուսուցիչներ |

| | |
|---|---|
| Ռիսկերը | • Մանկավարժների ինքնազարգացմանը խանգարող սոցիալական խոչընդոտներ<br>• Ուսուցիչների որոշակի մասի մոտ ՏՀՏ ծրագրերի իմացության և օգտագործման  միջին կարողություններ<br>• Ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվություն<br>• Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ |

# ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



# 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցները հանրապետության պաշտպանական ամրությունների բնագծերն են:

(Յորաս Ման)

| | |
|---|---|
| Հաստատության անվանումը՝ | <<ՀՀ Արագածոտնի մարզ Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ |
| Հաստատության հասցեն՝ | ՀՀ Արագածոտնի մարզ.գ.Փարպի Մկրտիչ Ներսիսյան 12 |
| Էլեկտրոնային փոստի հասցեն՝ | Parpi@schools.am |
| Դպրոցական կայքի հասցեն՝ | Parpi.schoolsite.am |
| Ֆեսբուքյան սոցիալական կայքի հասցեն՝ | Փարպիի միջնակարգ դպրոց |
| Կազմակերպա-իրավական տեսակը՝ | պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| Դպրոցի ենթակայությունը՝ | մարզային |
| Դպրոցի լիազոր մարմինը՝ | Արագածոտնի մարզպետարան |
| Դպրոցի աշխատանքային ծաբաթը՝ | հնգօրյա |
| Դպրոցի աշխատանքային ժամակարգը՝ | միահերթ |
| Դպրոցի դասարանների թիվը՝ | 12 դասարան |

Դպրոցի սովորողների թիվը՝ 239,ընդ որում՝

- Տարրական հանրակրթական ծրագիր՝ 95 սովորող
- Հիմնական հանրակրթական ծրագիր՝100 սովորող
- Միջնակարգ հանրակրթական ծրագիր՝44 սովորող

Դպրոցում սովորում են 2 ԿԱՊԿՈւ աշակերտ:

Ազգային փոքրամասնություն հանդիսացող աշակերտների թիվը՝ 1

Դպրոցի ընդհանուր տարածքը կազմում է 2581,80 քմ²

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1968 թվականին:Դպրոցը հարուստ պատմություն և ավանդույթներ ունեցող հաստատություններից է, որի պահպանումն ու զարգացումը, կրթական գործընթացի բարելավմանն ուղղված ջանքերը կրելու են շարունակական բնույթ:

Կրթական բարեփոխումների «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում դպրոցները վերակազմավորվեցին ըստ կրթական աստիճանների: Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 07.07.2010 թ.-ի №794-Ա/Ք հրամանի դպրոցին տրվեց տարրական, հիմնական և միջնակարգ կրթության ծրագրեր իրականացնելու լիցենզիա.

1. Տարրական ընդհանուր/09.06.2014թ./՝ սովորողների քանակի 105 սահմանային տեղով/1157/
2. Հիմնական ընդհանուր/09.06.2014թ./՝ սովորողների քանակի 95 սահմանային տեղով/0864/
3. Միջնակարգ ընդհանուր /09.06.2014թ./՝ սովորողների քանակի 170 սահմանային տեղով /0246/

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Արագածոտնի մարզպետի 01.11.2017 թ.-ի №35-Ա որոշմամբ, փոփոխությունը՝ 21.07.2020 թ.-ի №150 որոշմամբ:

Դպրոցը բնակավայրում միակն է և իր սահմանային հզորությամբ ապահովում է համայնքի դպրոցահասակ երեխաների ընդգրկումը հանրակրթության մեջ:

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական ծախսերի հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները և դպրոցի գործունեության այլ տեղեկություններ:

2017 թվականին ՄԱԿ-ի «Դպրոցական Տաք սնունդ» ծրագրի շրջանակներում կառուցվել է ճաշարան: Ծնողների մասնակի ներդրումով 1-4-րդ դասարանների աշակերտներն օգտվում են«Տաք սնունդ» ծրագրից:

1. Կրթական կարիքների նկարագրությունը

Դպրոցի գործունեության նպատակն է մինչև 2029 թվականը դառնալ ժամանակի անընդհատ փոփոխվող պահանջներին համապատասխան որակ ապահովող և կրթության բոլոր բնագավառներում հաջողություններ գրանցող հանրակրթական հաստատություն ՀՀ-ում:

Դպրոցն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով.

**Կառավարում**՝ ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը:

**Ուսումնադաստիարակչական աշխատանքներ**՝ համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ:

**Վարչատնտեսական գործունեություն**՝ ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա:

ա) կառավարում

- դպրոցը տվյալ համայնքի կրթադաստիարակչական ակտիվ կենտրոն դարձնելու նպատակով հաստատության կառավարում, ղեկավարում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և դպրոցի զարգացման ծրագրի տեսլականով
- դպրոցում կազմակերպվող աշխատանքներն առավել մրցունակ, նպատակային և հասցեական դարձնելու նպատակով համագործակցությունների (դպրոց-գերատեսչություն, դպրոց-համայնք, դպրոց-բուհ, դպրոց-մշակութային հաստատություններ, դպրոց- դպրոցևայլն) կառավարում, ղեկավարում
- դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով համայնքի և այլ շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում, կառավարում
- դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով հաստատությունում գործող խորհրդակցական մարմինների, կազմակերպվող աշխատանքների վերահսկողության և հաշվետվողականության կառավարում, ղեկավարում
- ըստ անհրաժեշտության իրականացնել ներդպրոցական վերահսկողություն, հետադարձ կապ հաստատելու համար և ամփոփել մանկավարժական համակազմի գործունեության համապատասխանությունը պլանավորված աշխատանքի արդյունքներին
- աշխատակիցների անընդհատ ուսուցում, աշխատակազմի գնահատում, աշխատակազմի արդյունավետության կառավարում,

Կազմակերպական զարգացում

- դպրոցի ռեսուրսների (մարդկային, ժամանակի, փոփոխությունների, ուսումնադիդակտիկ, նյութատեխնիկական, ֆինանսական ) կառավարում, ղեկավարում
- դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով տեխնոլոգիաների ինտեգրում և կառավարում
- գտնել, կատարելագործել և պահպանել իրենց գործին նվիրված համախոհների ուժեղ և միասնական թիմ, լավատես ու հայրենասեր որակյալ մասնագետներ

բ) ուսումնադաստիարակչական աշխատանքներ

- հանրակրթական պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով հանրակրթական պետական ծրագրերի իրականացում դաս՝ դասարանային մոտեցումով
- հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով արտադասարանական աշխատանքների (ուսումնական նախագծեր և խմբակներ) կազմակերպում
- հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով արտադպրոցական աշխատանքների կազմակերպում
- յուրաքանչյուր սովորողի համար՝ անկախ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներից, ազգությունից, մշակութային բազմազանությունից և այլ առանձնահատկություններից կրթության հավասար իրավունքով համընդհանուր ներառական կրթության կազմակերպում
- ուսուցիչների ինքնակրթության ևդասավանդման մեթոդների ստեղծագործական մակարդակի բարձրացում
- ուսուցման բարձրորակ, արդյունավետ և ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության ապահովում
- ապահովել ուսուցման մեթոդների իմացություն և կիրառում՝ազգային, համամարդկային բարոյական արժեքների վրա հիմնված կրթություն և դաստիարակություն կազմակերպելու համար
- դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում
- ձևավորել ուսուցման բարձր արժեհամակարգ
- կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումներ՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ

գ) վարչատնտեսական գործունեություն

- Հաստատության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հաստատության վարչատնտեսական աշխատանքների կազմակերպման արդյունավետ կառավարում
- բավարար ռեսուրսների ձեռքբերում՝ ծրագրում ամրագրված դրույթները իրագործելու համար
- ֆինանսական ռեսուրսների արդյունավետ, նպատակային կառավարում
- ուսումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովելու նպատակով որակյալ ուսումնական նյութերի համալրում, լրամշակում և արդիականացում
- ուսումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովելու նպատակով ենթակառուցվածքների համալրում, բարեկարգում ևարդիականացում

2. Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին. համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոցը գտնվում է Արագածոտնի մարզի Փարպի համայնքում, ուր երեխաների կրթությունն ու դաստիարակությունը հիմնականում կազմակերպվում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, հոդված 5):

Միջնակարգ դպրոցի գործունեությունը իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական և միջնակարգ որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Դպրոցում չեն իրականացվում կրոնական քարոզչություն և քաղաքական գործունեություն: Յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպվող կրթությունը հիմնականում նպատակաուղղված է նրա.

- մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
- մարդկային արժանապատվության պահպանմանը
- իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
- ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
- մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը
- ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը
- որպես ապագա քաղաքացու ձևավորմանը

ՀՀ Արագածոտնի մարզի Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոցի գործունեության ընթացքում նախատեսում եմ ստեղծել, իրականացնել և կատարելագործել վարչական, ուսումնադաստիարակչական, մեթոդական՝ ավանդական և նորարարական լավագույն մշակույթ՝ համագործակցելով՝

ա) Ծնողական համայնքի հետ

- ծնողական ժողովների, ծնողխորհուրդների կազմակերպում՝ ըստ կարգի
- հանդիպումների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերի, ծնողավարության հիմունքների քննարկման համար

- կազմակերպել միջոցառումներ, սեմինար ներ հոգեբանների, մանկավարժների հաղորդմամբ՝ծնող-դպրոց փոխհարաբերության ակտիվ, օգտակար,նպատակային լինելու մասին

բ) Կառավարման և ղեկավարման մարմինների հետ

- համագործակցել և ապահովել ուսուցիչների և աշակերտների տեղեկացվածությունը և մասնակցությունը «ԿԶՆԱԿ» հիմնադրամի (և ոչ միայն) կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, մրցույթներին, ծրագրերին
- տեղեկացված լինել և կիրառել կառավարության, ԿԳՄՍ նախարարության կողմից տրվող գործող օրենքները, հրամանները,

- ակտիվություն դրսևորել լիազոր մարմնի հրահանգների, կարգադրությունների կատարման գործում՝ հետևելով պետության կրթական քաղաքականության միտումներին

գ) Համայնքի հասարակության ակտիվ խմբերի հետ

- դաստիարակել համայնքային և ժողովրդավարական առաջադեմ գաղափարներ ու մոտեցումներ ունեցող սովորողներ, որոնք իրենց սովորածը կկիրառեն ոչ միայն իրենց կյանքում, այլ նա ևհամայնքին նպաստ բերող նախաձեռնություններում
- կազմակերպել հանդիպումներ, լսումներ տեղական ինքնակառավարման աշխատակազմի, երիտասարդ մասնագետների, ակտիվ շրջանավարտների հետ
- նպաստել անձնակազմի, մանկավարժների և աշակերտների շրջանում համայնքային կառավարման, խնդիրների վերհանման, համայնքային ծրագրերի մշակման, իրագործման և վերահսկման գիտելիք և հմտություն ձեռք բերելուն

Փարպիի Ղազար Փարպեցու անվան միջնակարգ դպրոցի գործունեության ձևավորման համար հաշվի են առնվել դպրոցի մանկավարժների սովորողների և ծնողների առաջարկությունները, կարծիքները:

3. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.

Ստորև ներկայացվում են հաստատության ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների հնարավորությունները աղյուսակների միջոցով:

239

| Ենթակառուցվածքներ | | |
|---|---|---|
| Անվանումը | Հնարավորությունները | Փաստացի վիճակը |
| Ջրամատակարարում | շուրջօրյա | լավ |
| Կոյուղացում | կենտրոնացված | լավ |
| Էլեկտրամատակարարումը | շուրջօրյա | բավարար |
| Գազամատակարարում | շուրջօրյա | լավ |
| Ջեռուցում | կենտրոնացված | լավ |
| Սանհանգույցներ | 11 | բավարար |
| Ինտերնետային կապ | բավարար հարմոնյա | բավարար |

| Ուսումնական նպատակով ֆիզիկական հարմարացումներ | | |
|---|---|---|
| Ճաշարան | 1 | լավ |
| Նիստերի դահլիճ | 1 | լավ |
| Գրադարան | 1 | բավարար |
| Համակարգչային կաբինետ | 1 | լավ |
| ՆԶՊ-ի կաբինետ | 1 | լավ |
| Մարզադահլիճ | 1 | լավ |
| Մարզահրապարակ | 2 | անբավարար |
| Դասասենյակ | 19 | բավարար |
| Ուսուցչանոց | 1 | բավարար |
| Առանձնասենյակ | 5 | բավարար |
| Հանդերձարան | 2 | լավ |

| Մարդկային ռեսուրսներ | |
|---|---|
| Անվանում | Քանակ |
| Տնօրեն | 1 |
| Ուս.գծով փոխտնօրեն | 1 |
| ՄԿԱ գծով փոխտնօրեն | 1 |
| Ուսուցչի օգնական | 2 |
| ԴԱԿ | 1 |
| Ուսուցիչներ | 31 |
| Դպրոցի խորհրդի անդամները | 19 |
| Մանկավարժական խորհրդի անդամները | 30 |
| Աշակերտական խորհրդի անդամները | 40 |
| Բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչներ | 29 |
| Միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչներ | 2 |
| Հիմնական ուսուցիչներ | 28 |
| Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 2 |
| Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ | 12 |
| Աշխատողների ընդհանուր թիվը | 42 |
| Աշակերտներ | 239 |

**Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ**

| Պաշտոնը | Անունը,ազգանունը,հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը | Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակամիջոցը | Պետական պարգևները,կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | Հարությունյան Բավական Թորգոմի | 4 | 39 | Մարզի Տարվա լավագույն ուսուցիչ |
| Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով | Սմբատյան Գոհար Մերուժանի | 1 | 29 | չունի |
| Տնորենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակցություններ ի գծով | Պետրոսյան Վարդան Ֆրիդոնի | 3 | 29 | չունի |
| Հաշվապահ | Մկրտչյան Մագթաղ Լևիկի | 41 | 18 | չունի |

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորների քանակը ( դրույքը ) |
|---|---|
| Վարչական անձնակազմը | |
| Տնօրեն | 1 |
| Տնօրենի տեղակալ ուսումնական գծով | 0,75 |
| Վարչատնտեսական մասի համակարգող | 0,75 |
| Հաշվապահ | 1 |
| Տնտեսվար | 1 |
| Ընդամենը | 4,5 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմը | |
| Ջինդեկ | 1 |
| Քաղպաշպանություն | 0,5 |
| Համակարգ. օպերատոր | 1 |
| Գրադարանավար | 1 |
| Դաստ.աշխ.կազմ. | 0,75 |
| Ուսուցչի օգնական | 1,5 |
| Ընդամենը | 5,75 |
| Սպասարկող անձնակազմը | |
| Հավաքարար | 2,4 |
| Գործավար | 1 |
| Հնոցապան | 2 |
| Խոհարար | 0,75 |
| Ընդամենը | 6,15 |

| Հաստատության գրադարանը | |
|---|---|
| Ցուցանիշ | Տվյալներ |
| Գրադարանի տարածքը քմ-ով | 24,1 մ$^2$ |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 0 |
| Գրադարանում ինտերնետին միացված համակարգիչների թիվը | 0 |
| Գրադարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը | 2 |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը ) ընդհանուր թիվը,այդ թվում | 6504 |
| -գեղարվեստական գրքերի թիվը | 3231 |
| -տեղեկատվական գրքերի թիվը(բառարաններ,հանրագիտարաններ,ատլասներ և այլն) | 900 |
| -ուսումնամեթոդականգրքերի թիվը | 2373 |
| -ամսագրերի թիվը | 0 |
| -այլ | 0 |
| Վերջին անգամ գրադարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվելու ամսաթիվը | 2019 |
| Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը | |
| Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը | 60 |

*Գրադարանը բավականաչափ հագեցած է գրականությամբ,սակայն չունի համակարգչային,թվայնացված ֆոնդ նաև ժամանակակից այլ տեխմիջոցներ:*

## 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Հաստատության գործունեության վերլուծության համար հիմք են ծառայել նախորդ ուսումնական տարիների ներքին գնահատման արդյունքները, հարցումները, շենքային և ռեսուրսային պայմանների դիտարկումը, դպրոցի ինտերնետային կայքի ուսումնասիրությունը:

## 2.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Դպրոցի շենքը տիպային է, կազմված է 2 մասնաշենքից, եռհարկանի է, մուտքերի թիվը՝ 2 մուտք, 4 ելք: Դպրոցի նախագծային հզորությունը՝ 650 աշակերտ: Դպրոցի շենքի շահագործումը մասամբ համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին: Դասարանները տեղակայված են երկու մասնաշենքերում: Դպրոցը հիմնադրվել է 1968 թվականին՝ 10-ամյա կրթություն իրականացնելու համար, սակայն իրականացնում է 12-ամյա կրթություն: Դպրոցի շենքը վերանորոգված է: Տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: Իրականացվում է համընդհանուր, շուրջօրյա ջեռուցում (բնական գազ):

Դպրոցի շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ ևայլն):

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան կրթական միջավայրը պատկերացնել առանց անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի անհնար է: Ուսումնական հաստատության զարգացման մեջ առաջնահերթություններից է ուսումնանյութական բազայի համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին:

Դպրոցը բավարար չափով ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| • Շենքային պայմաններ<br>• Դասարաններ՝ 1-12-րդ,կահավորում՝ բավարար<br>• Տանիք,պատուհաններ,ասֆալտապատ բակ, ցանկապատ<br>• Կոյուղի,ջրագիծ,սանհանգույցներ՝ 11<br>• Լոկալ ջեռուցման համակարգ<br>• Ճաշարան 1<br>• Գրադարանի առկայություն 1<br>• Մարզադահլիճ 1<br>• Ուխուցչանոց 1<br>• Հանդերձարան 2 | • Գույքով ապահովվածություն,դասարանների գույքի մաշվածություն<br>• Ընթերցասրահ<br>• Դպրոցը հագեցած չէ ժամանակակից տեխնիկայով և համակարգիչներով<br>• Ինտերնետի ամբողջական ապահովվածություն<br>• Թեքահարթակներ<br>• Ապաստարան<br>• Նկուղ |

| | |
|---|---|
| • Համակարգչային դասասենյակ 1՝ համալրված 9 համակարգիչներով,պրոյեկտոր՝1,տպիչ՝5<br>• ՆԶՊ սենյակ 1<br>• Միջանցքների հատակները սայթաքուն չեն<br>• Դպրոցի կահույքը հիմնականում համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին,ամուր և բարվոք վիճակում է<br>• Դպրոցում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլանը<br>• Դպրոցում նախասրահում,բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝համապատասխան գունային ցուցասլաքներով<br>• Դպրոցի տարածքը մաքուր է,աղբը կանոնավոր հավաքվում և դուրս են բերվում հաստատության տարածքից<br>• Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին<br>• Դպրոցը ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով<br>• Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր<br>• Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով<br>• Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները,նկարները,դեկորատիվ իրերը<br>• Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվնեիրն և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին | • Բացօթյա սպորտհրապարակ 2 |

| | |
|---|---|
| • Դասասենյակներում սեղան նստարանները դասավորված են շարքերով՝ուսման պրոցեսում դեպի գրատախտակ սովորողների հարմարավետությունն ապահովվելու նպատակով<br>• Դպրոցի սովորողները <<ֆիզկուլտուրա>>առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադահլիճում | |

| Դպրոցի շենքը և հարմարությունները | |
|---|---|
| Տվյալ շենքում դպրոցի տեղակայման թիվը | 1968 |
| Հարկայնությունը | 3 |
| Շենքի ընդհանուր մակերեսը | 2581,80 $մ^2$ |
| Հեռավորությունը ամենամոտ դպրոցից( մոտակա բանուկ ճանապարհով) | 1 կմ |

| Անվանումը | Քանակ/չափ | Պահանջարք |
|---|---|---|
| Համակարգիչ | 9 | 10 |
| Տպիչ | 5 | 3 |
| Պրոյեկտոր | 1 | 3 |
| Յուպիտս | 1 | |

| Վերահսկողության մեխանիզմներ՝<br>• Մշտադիտարկում<br>• Շարունակական բարելավում<br>• Վերանայում և հստակեցում | Վերահսկող՝<br>• Տնօրենություն<br>• Համակարգող | Հաշվետվության ձևեր՝<br>• Ներքին գնահատում<br>• ՈւԳԱ |
|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հաստատության շենքի և տարածքի անվտանգ շահագործում | | | | | |
| 2. | Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավում | | | | | |
| 3. | Սովորողների անվտանգ, բարեկարգ միջավայրի ձևավորումը | | | | | |
| 4. | Նյութատեխնիկական գույքի ձեռքբերումը | | | | | |

2.2

| Տարածքների անվանումը | |
|---|---|
| Անվանումը | Ընդհանուր մակերեսը |
| Ճաշարան | 176մ$^2$ |
| Գրադարան | 24,1մ$^2$ |
| Համակարգչային կաբինետ | 30մ$^2$ |
| ՆԶՊ-ի կաբինետ | 70մ$^2$ |
| Մարզադահլիճ | 550մ$^2$ |
| Մարզահրապարակ | 2400մ$^2$ |
| Առանձնասենյակ 5-հատ | 26մ$^2$,ընդհանուրը130մ$^2$ |
| Նիստերի դահլիճ | 550մ$^2$ |
| Բուժ սենյակ | 9մ$^2$ |
| Սանհանգույց 11-հատ | 12,7մ$^2$ընդհանուրը140մ$^2$ |
| Ուսուցչանոց | 18մ$^2$ |
| Դասասենյակներ 19-հատ | Ընդհանուրը 1220մ$^2$ |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը հաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են Հանրակրթության մասին ՀՀ օրենքում և ուսումնական հաստատության կանոնադրության մոջ:

Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիա լկառավարման խորհուրդ: Կառավարման խորհուրդը բաղկացած է 19 անդամից:

Տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| --- | --- |
| • Կառավարման խորհուրդը մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան<br>• Կառավարման խերհուրդը ապահովում է վերահսկողություն և պատասխանատվություն է կրում տնօրենին դպրոցի արդյունավետ կառավարման համար՝ապահովելով քաղաքականության և կանոնակարգերի հավատարմությունը<br>• Քննարկվում է ուսումնադաստիրակչական գործունեության,այդ թվում՝ մանկավարժհոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները<br>• Հրավիրվում են նիստեր,արձանագրվում են<br>• ԿԽ որոշումներ<br>• Կառավարման խորհրդի և տնօրենի համագործակցության դրական մթնոլորտ | • Կառավարման խորհուրդը և տնօրենը ունեն տարբեր ըեսլական և ընդհանուրնպատակներ դպրոցի համար<br>• Կառավարման խորհուրդը և տնօրենի միջև անբավարար խորհրդակցությունը հանգեցնում է որոշումների կայացմանը,գործողությունների սխալ դասակարգմանը<br>• Կառավարման խորհրդի նիստերին որոշ անդամների բացակայություններ<br>• Կառավարման խորհրդի անդամների կողմից պասիվ, ձեռնպա վերաբերմունք<br>• Կառավարման խորհրդի անդամների միջև համագործակցության պակաս |

| | |
|---|---|
| • Հաստատում է կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները,այդ թվում՝աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները<br><br>• Ֆինանսական առաջարկությունները ընդունվում են և աջակցվում<br><br>• Աջակցում է բոլոր նախաձեռնություններին<br><br>• Քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները<br><br>• Տնօրենի ներկայացմամբ լսում և հավանություն տալիս զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությանը<br><br>• Տնօրենի ներկայացմամբ հաստատում է կարգի համաձայն տնօրենի կողմից մշակված՝ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը<br><br>• Այլ կառուցվածքային և պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարում,հաստատության տնօրենը աջակցում է հաստատության կառավարման մարմնի աշխատանքներին | |

Տվյալներ ուսումնական հաստատությոն կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ՝

| Անուն, ազգանուն | Աշխատանքի վայրը,զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը | Պետական պարգևները,կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Սմբատյան Գոհար Մերուժանի | Ղ.Փարպեցու մ/դ մաթեմատիկայի ուսուցիչ | բարձրագույն | 29.05.2021թ | |
| Կարապետյամ Հայկուշ Ալեքսանի | Ղ.Փարպեցու մ/դ պատմության ուսուցիչ | բարձրագույն | 24.11.2023թ | |
| Գրիգորյան Վերգինե Բաբկենի | Տնային տնտեսուհի | միջնակարգ | 29.05.2021թ | |
| Հովակիմյան Ռոզա Ժորայի | Տնային տնտեսուհի | բարձրագույն | 29.05.2021թ | |
| Թադևոսյան Ռազմիկ Սարգիս | Արագածոտնի մարզպետարան | բարձրագույն | 20.12.2022թ | |
| Փիլիպոսյան Փայլակ Հրաչիկի | Արագածոտնի մարզպետարան | բարձրագույն | 12.07.2022թ | |
| Ավագյան Ավագ Սարուխանի | համայնքապետարան | բարձրագույն | 19.01.2023թ | |
| Պետրոսյան Քնքուշ Վազգենի | համայնքապետարան | բարձրագույն | 29.05.2021թ | |
| Նալբանդյան Լուիզա Բեգլարի | Բազմաղբուրի մ/դ | բարձրագույն | 29.05.2021թ | |
| Ղազարյան Սոնա Վարդանի | Բազմաղբյուրի մ/դ | բարձրագույն | 26.10.2023թ | |
| Ալոյան Դիլբար Ռեզոյի | Տնային տնտեսուհի | միջնակարգ | 29.05.2021թ | |
| Նազարյան Աննա Հակոբի | Տնային տնտեսուհի | միջնակարգ | 29.05.2021թ | |
| Գրիգորյան Սոնիկ Աղվանի | Ղազարավանի մ/դ | բարձրագույն | 29.05.2021թ | |
| Զաքարյան Լուսինե Մկրտիչի | Ղազարավան մ/դ | բարձրագույն | 29.05.2021թ | |
| Կալեյան Աննա Սուրենի | Տնային տնտեսուհի | միջնակարգ | 29.05.2021թ | |
| Գալստյան Թավրիզ Սեթի | Տնայիյ տնտեսուհի | միջնակարգ | 29.05.2021թ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ճորկենցյան Նարինե Վասիկոյի | Ղազարավանի համայնքապետարան | բարձրագույն | 29.05.2021թ | |

Սաֆարյան Վարդան Սաուրի ՀՀ.ԿԳՆ-նախարարություն բարձրագույն 29.05.2021թ

Մանուկյան Արսեն Վարդանիկի ՀՀ.ԿԳՆ-նախարարություն բարձրագույն 29.05.2021թ

*Խորհրդի աշխատանքը բավարար է,սակայն ցանկալի է ակտիվացնել նրա ներգրավվածությունը ուսումնական հաստատության աշխատանքների բարելավման ուղղությամբ*

| Վերահսկողության մեխանիզմներ՝<br>• Մշտադիտարկում<br>• Հետադարձ կապ<br>• Վերանայում և հստակեցում | Վերահսկող՝<br>• Տնօրենություն<br>• Կառավարման խորհուրդ | Հաշվետվության ձևեր՝<br>• Ներքին գնահատում<br>• ՈւԼԴԱ |
|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կառավարման խորհրդի և տնօրենի համագործակցությունը | | | | | |
| 2. | Կառավարման խորհրդի անդամների մասնակցությունը և ներգրավվածությունը | | | | | |
| 3. | Դպրոցի թափանցիկ և արդյունավետ կառավարումը | | | | | |

## 2.3 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցում ձևավորվել և գործում են դպրոցի կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, առարկայական մեթոդական միավորումները, ծնողական և աշակերտական խորհուրդները: Ծնողական և աաշակերտական խորհուրդները արդյունավետ են գործում:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը համագործակցումէ և՛կառավարման, և՛խորհրդակցական մարմինների հետ:

Դպրոցի գործունեությունը լիարժեք և արդյունավետ կազմակերպելու համար շատ կարևոր է բոլոր մարմինների համագործակցված և բարեխիղճ աշխատանքը

Կառավարման խորհուրդը բաղկացած է 19 անդամներից: Օրենքով նախատեսված պարբերականությամբ հրավիրվում են նիստեր: Խորհուրդը գործում է կանոնադրական իր լիազորությունների շրջանակներում: Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդիդերը:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար: Մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվում են արձանագրությունների մատյանում:

Մանկավարժական խորհրդի անդամների համար կկազմակերպվեն սեմինարներ, վերապատրաստումներ, կոնֆերանսներ ոչ միայն հանրակրթական դպրոցի հիմնարար փաստաթղթերին ծանոթացնելու նպատակով, այլև ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համապատասխան կրթություն կազմակերպելու համար:

Աշակերտական խորհուրդ՝ դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն է, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտական խորհուրդում ընդգրկված են
40 սովորողներ:

Ծնողական խորհուրդ՝ սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: Ծնողական խորհուրդը կազմվածէ 12 անդամներից:

Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհրդների հետ առավել սերտ համագործակցելու միջոցով:

Առարկայական մեթոդական միավորումներ՝ դպրոցում գործում են 5 առարկայական մեթոդական միավորումներ՝ տարրական, հումանիտար, բնագիտամաթեմատիկական,օտար լեզուներ, ֆիզիկական,ռազմահայրենասիրական,արվեստ - արհեստ (տեխնոլոգիա, ՆԶՊ, ֆիզկուլտուրա, շախմատ, երաժշտություն): Ուսումնական տարվա ընթացքում, ըստ տարեկան աշխատանքային ծրագրի, գումարվում են մեթոդմիավորումների նիստեր: գրությունների մատյանում: Կզարգացվի և կհարստացվի առարկայական մեթոդական միավորումների մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով, առարկայական մեթոդական միավորումների համար նախատեսված վերապատրաստումների միջոցով:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| • ԿԽ ԱՄԽ որոշումներ<br>• ԾԽ և ԱԽ որոշումներ<br>• Մ/Մ որոշումներ<br>• Խորհուրդների արձանագրություններ<br>• Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝ հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և  ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները<br>• Քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը<br>• Քննարկում է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակին առնչվող հարցեր<br>• Կոլեգյալ կառավարման մարմնի բարեխիղճ աշխատանք<br>• Ձևավորված մեթոդական միավորումներ<br>• Մեթոդական միավորումների համակարգված աշխատանք<br>• Բավարար փաստաթղթաշրջանառություն<br>• Ծնողական խորհուրդը լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, անում է առաջարկներ<br>• Ծնողական խորհուրդը ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանականա շխատանքներում<br>• Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին<br>• Գումարվում են առարկայական ՄՄ կանոնավոր նիստեր | • Դասը վարում է ծնողը<br>• Համադպրոցական էքսկուրսիաների կազմակերպում<br>• Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս<br>• Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցության պակաս<br>• Աշակերտական խորհրդի իրազեկվածության և նախաձեռնությունների պակաս<br>• Միջդպրոցական մեթոդմիավորումներ<br>• Ծնողների ներգրավածությունը մեծ չ է ուսումնական գործընթացին<br>• Չեն համագործակցում հասարակական կազմակերպությունների հետ<br>• Ծնողական խորհրդի կողմից նախաձեռնությունների պակաս<br>• Երկարօրյա ուսուցում չի կազմակերպվում /ծնողական նախաձեռնության բացակայություն/<br>• Հավելյալ ֆինանսական միջոցների ուղղորդման բացակայություն համապատասխան օղակներում<br>• Կառավարման խորհուրդ-համայնք, |

| | |
|---|---|
| • Ծնողական խորհրդի անդամների կանոնավոր հաճախում ժողովներին և մասնակցություն նիստերին<br>• Ծնողները կազմակերպում են ուսումնական և ճանաչողական էքսկուրսիաներ<br>• Հաստատության գործունեության թափանցիկություն<br>• Աշակերտական խորհուրդը մասնակցում է դպրոցի կյանքին, դառնում միջոցառումների հեղինակ, մասնակցում է հասարակական և կամավորական աշխատանքների | խորհրդակցական մարմիններ-համայնք պասիվ համագործակցություն |

<table>
<tr><td colspan="2">Վերահսկողության մեխանիզմներ՝<br>• Մշտադիտարկում<br>• Վերանայում և հստակեցում<br>• Հետադարձ կապ<br>• Շարունակական բարելավում</td><td colspan="3">Վերահսկող՝<br>• Տնօրենություն</td><td colspan="2">Հաշվետվության ձևեր՝<br>• Ներքին գնահատում<br>• Խորհուրդների նիստերի արձանագրություն<br>• ՈւԴԱ</td></tr>
<tr><td>1.</td><td>Տնօրենի և կառավարման ու խորհրդակցական մարմինների համագործակցություն</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>2.</td><td>Կառավարման և խորհրդակցության մարմինների գործունեությունը</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>3.</td><td>ՈՒսուցման արդյունավետ բարձրացումը</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>4.</td><td>Ծնողական  և աշակերտական խորհուրդների ներգրավածությունը</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>5.</td><td>Համագործակցությունը ի շահ կրթական բարենպաստմիջավայրի ապահովմանը</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>

## 2.4 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Աշակերտի մտավոր, սոցիալական, հուզական և աշխարհայացքային գործոններով է պայմանավորված վերջիններիս առաջադիմությունն ու հայրենիքի համար պիտանի լինելու առաքելության կայացումը: Հետևաբար, շատ դեպքերում հենց մանկավարժի և դպրոցի ղեկավարության ճիշտ աշխատանքն է կոչված կանխորոշելու դեռևս չձևավորված անհատականության դրական կամ բացասական կերպար դառնալու գրավականը:

Դպրոցի աշակերտական համակազմի հետ աշխատելիս կարևորում եմ  աշխատակազմի ամենօրյա համառ,  հետևողական աշխատանքը, խստապահանջությունը,  կրթության ու դաստիարակության միասնականությունն ու որակը,  գրանցած հաջողությունները:   Անհրաժեշտ եմ համարում

պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսել հաջողություններ արձանագրած, շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, աջակցել նրանց նախասիրությունների իրականացման հարցում, նպատակ ունենալով զարգացնել դպրոցում առողջ մրցակցություն, մոտիվացիա և կրթական առաջընթաց:

Աշակերտական համակազմը ակտիվ մասնակցություն կունենա ԿԶՆԱԿ-ի, ԿԳՄՍ-ի, կրթական տարբեր հիմնադրամների կողմից կազմակերպվող միջոցառումներին, համաժողովներին, մրցույթներին, նախագծերին:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| • Սովորողները ստանում են հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն<br>• Դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցում են ուսումնական հաստատության կառավարմանը<br>• Ազատ արտահայտում են սեփական կարծիքն ու համոզմունքները<br>• Անվճար օգտվում են դպրոցի ուսումնանյութական բազայից<br>• Հաճախում և մասնակցում են ուսումնական պարապմունքներին<br>• Պաշտպանված են ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից | • Դասը վարում է աշակերտը<br>• Բուհեր ընդունվելու ցածր ցուցանիշ<br>• Մասնկացություն խմբակներում, նախագծային աշխատանքներում<br>• Մասնակցությունը միջազգային կամ տեղական ծրագրերում<br>• Մասնագիտական կողմնորոշում<br>• Սովորողների որոշ մասի մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի պակաս<br>• Նպատակասլացության բացակայություն<br>• Մրցակցային մտածելակերպ<br>• Ընթերցանության, ինքնակրթության նկատմամբ նվազ հետաքրքրություն |

| | |
|---|---|
| • Ակտիվ մասնակցությունը արտադասարանական միջոցառումներին<br>• Մասնակցությունը «Կենգուրու» և«Մեղու» հանրապետական մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին, աշակերտական կոնֆերանսների<br>• Մարզական մրցումներում հաղթանակներ (կարատե,ըմբշամարտ,ֆուտբոլ,շախմատ)<br>• Մասնակցությունը ստեղծագործական և սպորտային մրցույթներին<br>• 120-200 ժամ բացակայած աշակերտներ<br>• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ներառված են ուսումնադաստիրակչական գործընթացում և մշտական ու հատուկ ուշադրության կենտրոնում են մանկավարժական համակազմի և ընկերների կողմից<br>• Սովորողները իրար հանդեպ ունեն հանդուրժող վերաբերմունք<br>• Հարգալից վերաբերմունք ուսուցիչների նկատմամբ<br>• Աշակերտները օգտվում են emis.am,dasaran.am,lib.armedu.am կայքերից և դպրոցի ֆեսբուքյան էջից | • Առարկայական օլենպիադաների մասնակցողների թվի նվազում |

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար՝

| Դասարանների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուտարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան(աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 2- րդ դասարամ | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 3-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 4-դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 5-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 6-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 7-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 8-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 9-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 10-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 11-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 12-րդ դասարան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| Ընդամենը | 12 | 12 | 12 | անփոփոխ |

Աշակերտների թվի դինամիկան




| Ժամանակահատված | Տարրական դպրոց | Հիմնական դպրոց | Ավագ դպրոց |
|---|---|---|---|
| 2019-2020 | 62 | 77 | 73 |
| 2020-2021 | 104 | 35 | 95 |
| 2021-2022 | 47 | 47 | 45 |

Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների   համար՝

| Ցուցանիշը | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան( աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուստարվա սկզբին՝տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 213 | 219 | 213 | նվազում |
| Սովորողների ընդհանուր թիվը ուտարվա վերջին՝տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | 218 | 219 | 213 | աճ |
| ՈՒսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 2 | 4 | 6 | աճ |
| ՈՒսումնական տարվա ընթացքում հեռացված սովորողների թիվը | - | - | - | - |

*Թվաքանակի փոփոխման պատճառը հիմնականում տեղափոխված ընտանիքների թվի ավելացումն է:*

| Վերահսկողության մեխանիզմներ՝<br>• Մշտադիտարկում<br>• Վերանայում և հստակեցում | Վերահսկող՝<br>• Տնօրենություն | Հաշվետվության ձևեր՝<br>• Ներքին գնահատում |
|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացու ձևավորում | | | | | |
| 2. | ՈՒսումնառության որակի բարձրացում | | | | | |
| 3. | Մրցակցող,որոշում կայացնող,կարծիքն ազատ արտահայտող աշակերտները | | | | | |
| 4. | Աշակերտների ընդգրկվածությունը միջոցառումներին,մրցույթներին | | | | | |

## 2.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է դպրոցում ձևավորել բանիմաց, ժամանակակից կրթական պահանջներին համընթաց քայլող, պատրաստակամ մանկավարժների հզոր թիմ, որը կկարողանա իրականացնել դպրոցի որդեգրած քաղաքականությունը: Գրագետ, մարդկայինդրականհատկանիշներովօժտվածևսրտացավմանկավարժականկոլեկտիվի շնորհիվհնարավորէհասնել ցանկալի արդյունքի: Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ մանկավարժների առկայություն: Կրթության որակի բարձրացման ևբարեփոխումներիհաջողությանապահովման առանցքայինդերը պատկանումէ ուսուցչին:

Ուսուցիչները համաճարակի ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով, տարբեր առցանց հարթակներում իրականացրել են հեռավար ուսուցում:

Մանկավարժական համակազմը համալրվելու է նոր գրագետ, որակյալ, բանիմաց կադրերով: Խրախուսվելու են մանկավարժության բնագավառում հաջողություններ գրանցած ուսուցիչները:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների կատարելագործման համար կկազմակերպվեն սեմինարներ, վերապատրաստումներ, դասընթացներ, համաժողովներ, խորհրդատվություններ, խորհրդակցություններ:

Բոլոր մանկավարժները պետք է տիրապետեն իրավական փաստաթղթերի բովանդակային պահանջներին, որը շատ կարևոր է յուրաքանչյուր մանկավարժի համար:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| --- | --- |
| • Դպրոցի մանկավարժները մասնակցում են ուսումնական հաստատության կառավարմանը՝ Հայաստանի<br>•Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով<br>•Մասնակցու են ուսումնական գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը<br>•Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝մշակում և իրականացնում են դասապլաններ,ռեմատիկ ծրագրեր<br>•Օգտվում են ուսումնական հաստատության | • Փորձի փոխանակման պակաս<br>• <<Տարվա լավագույն ուսուցչի>>մրցույթի մասնակցության,տարակարգ ունեցող,կամավոր ատեստավորված ուսուցիչներ չկան<br>• Կրթական ֆորումներին և աշխատաժողովների մասնակցության ցածր ակտիվություն<br>• Ժամանակակից մեթոդների,ՏՀՏմիջոցների ոչ լիարժեք տիրապետում<br>• Նախագծային ուսուցման ոչ բավարար հմտություններ<br>• ՈՒսուցիչների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների իմացության բավարար մակարդակ |

| | |
|---|---|
| գրադարանի,տեղեկատվական պահոցների ծառայություններից՝ | |
| ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան<br>• Նպաստում են երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝հաշվի առնելով յուրաքանչյուր կրթական կարիքների առանձնահատկությունները<br>• Բարձրագույն կրթություն ունեցող,բազմափորձ և հմուտ մանկավարժներ<br>• Պարտադիր ատեստավորված ուսուցիչներ<br>• Աշակերտակենտրոն մոտեցում<br>• Մասնակցություն մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող սեմինարների,վեբիարների<br>• Ինքնուրույն և իրենց միջոցով մասնակցում են վերապատրաստումների<br>• Պահպանում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները<br>•Մասնակցում են հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) նիստերին և աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքներին<br>• Մասնակցում են մանկավարժական խորհրդի նիստերին<br>• Կատարում են գրանցումներ էլեկտրոնային մատյանում<br>• Կազմակերպում են օրինակելի և ուսանելի բաց դասեր,դաս- | • Չեն բողոքարկում ուսումնական հաստատության ղեկավար մարմինների հրամանները,որոշումները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրոնսդրությամբ սահմանված կարգով<br>• Չկան միջազգային ու հանրապետական պարբերականներում տպագրվող ուսուցիչներ<br>• Ավագ սերնդի ուսուցիչների մոտ առցանց կրթության գործիքների թերի տիրապետում(teams,zoom,class-room,khan academy)<br>• Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի հետ աշխատանքի թերություններ<br>• Այլ դպրոցի ուսուցիչների հետ համագործակցության բացակայություն<br>• ՈՒսուցիչների զգալի մասիը չի կիրառում նոր տեխնոլոգիաներ<br>• Աշխատանքում ուսուցիչների միջև մրցակցության բացակայություն<br>• ՈՒսւոցիչների 26% կենսաթոշակառուներ են |

| | |
|---|---|
| միջոցառումներ<br>• Արդյունավետորեն կառավարում են դասարանի միջավայրը՝ ստեղծելով դրական,ներառական և կարգապահ մթնոլորտ<br>• Հայտնաբերում և կանխարգելում են բուլինգի դեպքերը Հեռավար կրթության իրականացում տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով<br>• Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ<br>• Բոլորն աշխատում են իրենց մասնագիտությամբ<br>• Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչները վերապատրաստման դասընթացին մասնակցում են ուսումնական հաստատության ֆինանսական միջոցների հաշվին | |

Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար՝

| Ուսուցիչների թիվը | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 2 | 2 | 1 | նվազում |
| 31-ից 40 տարեկան | 6 | 6 | 7 | աճ |
| 41-ից 50 տարեկան | 5 | 5 | 4 | նվազում |
| 51-ից 55 տարեկան | 7 | 4 | 4 | պահպանվել է |
| 56 տարեկան և ավելի | 11 | 16 | 14 | նվազում |

*Փոփոխությունը կախված էարդեն աշխատող ուսուցիչների տարիքների բնականոն աճից,նոր ընդունված աշխատակիցների տարիքից:*




Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար՝

| Ցուցանիշը | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան( աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
